ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թ.-ի սեպտեմբերի 25-27-ը Ղազախստանի Հանրապետություն (Սեմեյ) շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատար Սամվել Սահակյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**
   Սամվել Սահակյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ղազախստանի Հանրապետություն (Սեմեյ), 2019թ սեպտեմբերի 25-27-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԱՊՀ երկրների գործադիր կոմիտե

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհրդի 19-րդ նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհրդի 19-րդ նիստին մասնակցում էին Անկախ Պետությունների Համագործակցության անտառտնտեսությունների գերատեսչությունների ղեկավարները և պաշտոնատար անձինք՝ Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը և Տաջիկստանի Հանրապետությունը: Խորհրդին մասնակցում էին նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչ և ԱՊՀ Անտառային ոլորտի աշխատողների արհմիությունների ֆեդերացիայի նախագահ:

   Հաստատվել է անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհրդի 19-րդ նիստի օրակարգը:
   Օրակարգում ընդգրկվել են հետևյալ հարցերը՝

1. **անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհրդի նախորդ՝ 18-րդ նիստում ընդունված որոշումների կատարման մասին՝**

1.1 տեղեկատվությունն ընդունվեց ի գիտություն

1.2 որոշվեց հանձնարարել անդամ Անկախ Պետությունների Համագործակցության անտառտնտեսություններին միջոցներ ձեռնարկել որոշումների կատարման ընթացքում եղած բացթողումները վերացնելու ուղղությամբ.

2. **2016-2020 թթ միջոցառումների ծրագրի առաջին փուլով նախատեսված համագործակցության հիմնական ուղղությունների կատարման ընթացքի մասին՝**
ՈՐՈՇՎԵՑ.

2.1 հավանություն տալ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցչի տեղեկատվությանը 2016-2020 թթ միջոցառումների ծրագրի իրականացման միջանկյալ արդյունքների մասին.

2.2 հանձնարարել անդամ-պետությունների լիազորված մարմիններին մինչև 2020 թվականի հունիսի 1-ը Ռուսաստանի անտառտնտեսությանը տրամադրել ամփոփ տեղեկատվություն 2016-2020 թթ միջոցառումների ծրագրի իրականացման վերաբերյալ.

2.3 հանձնարարել Ռուսաստանի անտառտնտեսությանը խորհրդի քարտուղարության հետ համատեղ ամփոփել անդամ-պետությունների լիազորված մարմինների կոցմից ներկայացված վերոնշյալ միջոցառումների ծրագրի առաջին փուլի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել այն խորհրդի հերթական նիստին.

3. **2021-2025 թթ միջոցառումների ծրագրի նախագծում երկրորդ փուլով նախատեսված համագործակցության հիմնական ուղղությունների ներառվելիք առաջարկների մասին՝**
ՈՐՈՇՎԵՑ.

3.1 առաջարկել անդամ-պետությունների անտառային ոլորտի պատասխանատուներին մինչև 2020 թվականի մարտի 1-ը ռուսական կողմին ներկայացնել առաջարկություններ մինչև 2025 թվականը անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության հիմնական ուղղությունների վերաբերյալ միջկառավարական խորհրդի միջոցառումների ծրագրի երկրորդ փուլի նախագծում (2021-2025 թթ) ներառելու նպատակով.

3.2 հանձնարարել ռուսական կողմին խորհրդի քարտուղարության հետ համատեղ ամփոփել անդամ-պետությունների անտառային գերատեսչությունների առաջարկությունները և խորհրդի հերթական նիստին ներկայացնել միջոցառումների ծրագրի երկրորդ փուլի (2021-2025 թթ) նախագիծը.

4. **անտառամթերքների ծագման, պիտակավորման և տեղաշարժի նկատմամբ վերահսկողության գործում փորձի փոխանակման մասին՝**
ՈՐՈՇՎԵՑ.

4.1 ընդունել ի գիտություն ռուսական պատվիրակության տեղեկատվությունը անտառամթերքների ծագման, պիտակավորման և տեղաշարժի վերահսկողության վերաբերյալ.

4.2 առաջարկել անդամ-պետությունների անտառային ոլորտի պատասխանատուներին մինչև 2020 թվականի մայիսի 1-ը տեղեկատվություն փոխանակել

անտառամթերքների ծագման, պիտակավորման և տեղաշարժի վերահսկողության գործում առկա փորձի վերբերյալ.

4.3 հանձնարարել Ռուսաստանի անտառտնտեսությանը ամփոփել ներկայացված տեղեկատվությունը և ներկայացնել այն խորհրդի հերթական նիստին.

5. **2017-2019 թվականներին անտառարդյունաբերական համալիրի և անտառտնտեսության միջկառավարական խորհրդի գործունեության վերաբերյալ՝**

ՈՐՈՇՎԵՑ.

5.1 հավանություն տալ անտառարդյունաբերական համալիրի և անտառտնտեսության միջկառավարական խորհրդի 2017-2019 թվականներին գործունեության մասին հաշվետվությանը.

5.2 մինչև 2019 թվականի հոկտեմբերի 10-ը ԱՊՀ գործադիր կոմիտեին ներկայացնեանտառարդյունաբերական համալիրի և անտառտնտեսության միջկառավարական խորհրդի գործունեության վերաբերյալ քննարկման արդյունքում լրամշակված հաշվետվություն.

6. **2019 թվականի սեպտեմբերի 13-ին ԱՊՀ տնտեսական խորհրդի որոշմամբ հաստատված ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում հիվանդությունների և անտառային վնասատուների կանխարգելմանն և վերացմանն ուղղված համագործակցության մասին 2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագրի միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ՝**

ՈՐՈՇՎԵՑ.

6.1 հավանություն տալ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցչի ԱՊՀ-ի անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում հիվանդությունների և անտառային վնասատուների կանխարգելմանն և վերացմանն ուղղված համագործակցության մասին 2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագրի միջոցառումների ծրագրի կատարման մասին տեղեկատվությանը.

6.2 հանձնարարել անդամ-պետությունների լիազորված մարմիններին մինչև 2020 թվականի մայիսի 1-ը Ռուսաստանի անտառտնտեսությանը տրամադրել ամփոփ տեղեկատվություն միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ.

6.3 հանձնարարել Ռուսաստանի անտառտնտեսությանը խորհրդի քարտուղարության հետ համատեղ ամփոփել անդամ-պետությունների լիազորված մարմինների կոցմից տրամադրված տեղեկատվությունը և ներկայացնել այն խորհրդի հերթական նիստին.

7. **ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում հիվանդությունների և անտառների վնասատուների օջախների կանխարգելման և վերացման վերաբերյալ համագործակցության մասին 2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագրով նախատեսված ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում տարածված վնասատուների (ինվազիվ և կարանտին) անտառային տեսակների ցանկի պատրաստման ընթացքի մասին՝**

ՈՐՈՇՎԵՑ.

7.1 ընդունել ի գիտություն ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցիչների տեղեկատվությանը ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում

հիվանդությունների և անտառների վնասատուների օջախների կանխարգելման և վերացման վերաբերյալ համագործակցության մասին 2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագրով նախատեսված ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում տարածված վնասատուների (ինվազիվ և կարանտին) անտառային տեսակների ցանկի պատրաստման ընթացքի մասին.

7.2 հանձնարարել ԱՊՀ անդամ պետությունների անտառային գերատեսչություններին

7.2.1 մինչև 2019 թվականի նոյեմբերի 1-ը ճշտել ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում հիվանդությունների և անտառների վնասատուների օջախների կանխարգելման և վերացման վերաբերյալ համագործակցության մասին 2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագրի կատարման պատասխանատուներին.

7.2.2 մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը քննարկման ներկայացնել վնասատուների ցանկը.

7.2.3 մինչև 2020 թվականի մարտի 1-ը համաձայնեցնել ԱՊՀ անդամ պետությունների հետ սահմանամերձ տարածքներում տարածված վնասատուների ցանկը.

8 **ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում բնական հրդեհների կանխարգելման և մարման 2013 թվականի մայիսի 31-ի համաձայնագրի կատարման ընթացքի մասին՝**

ՈՐՈՇՎԵՑ.

8.1 ընդունել ի գիտություն ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցիչների տեղեկատվությունը ԱՊՀ անդամ պետությունների սահմանամերձ տարածքներում բնական հրդեհների կանխարգելման և մարման 2013 թվականի մայիսի 31-ի համաձայնագրի կատարման ընթացքի մասին.

8.2 ԱՊՀ անդամ պետությունների անտառահրդեհային ծառայություններին ուսումնասիրել հակահրդեհային վարժանքների համատեղ անցկացման հնարավորությունները՝ փորձի փոխանակման նպատակով.

8.3 միջազգային միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգի տեղեկատվական համակարգի փորձի փոխանակում,

8.4 ուսումնասիրել «Լավագույն անտառային հրշեջ» միջազգային մրցույթի անցկացման հարցը.

9 **մինչև 2030 թվականը ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման ծրագրի նախագծում ներառվելիք առաջարկությունների վերաբերյալ՝**

ՈՐՈՇՎԵՑ.

9.1 ընդունել ի գիտություն ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցչի տեղեկատվությունը մինչև 2030 թվականը ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի կատարման խնդիրների մասին.

9.2 հավանություն տալ անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության մասով միջկառավարական խորհրդի առաջարկություններին մինչև 2030 թվականը ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի վերաբերյալ.

10. 2020–2021 թվականների ընթացքում ԱՊՀ բարձրագույն մարմինների մշակմանը և հնարավոր քննարկմանը ներկայացվելիք ԱՊՀ խորհրդի անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության կողմից առաջարկվող նյութերի ցանկ՝

ՈՐՈՇՎԵՑ.

10.1 ընդունել ի գիտություն ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցիչների և ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցչի տեղեկատվությունը համագործակցության համատեքստում հետագա անելիքների և հեռանկարային ուղղությունների մասին .

10.2 հավանություն տալ միջկառավարական խորհրդի առաջարկություններին.

11. անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհրդի նախագահի մասին՝

ՈՐՈՇՎԵՑ.

11.1 ընդունել ի գիտություն ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցչի տեղեկատվությունը խորհրդի նախագահի թեկնածությունների մասին

11.2 հաջորդ ժամկետի համար որպես նախագահ հաստատել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատար Ս. Սահակյանի թեկնածությունը,

12. անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհրդի 20-րդ նիստի անցկացման վայրի և ժամկետների մասին՝

ՈՐՈՇՎԵՑ.

հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում, 2020թ-ին (երկրորդ կիսամյակ):

Անտառարդյունաբերական համալիրի և անտառային տնտեսության միջկառավարական խորհուրդը սեպտեմբերի 27-ին ավարտեց 19-րդ նիստի աշխատանքները:

7. <u>ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

Շրջակա միջավայրի նախարարության
անտառային կոմիտեի
նախագահի պաշտոնակատար

Սամվել Սահակյան
01.10.2019թ